«Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ» ծրագրի շրջանակներում տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող միջոցառումների վերաբերյալ

(հունվար-հունիս 2026թ.)

## 1. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի (ԿԱՊԿ, ԿՋԱՊԿ) գնահատում

<< Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում>> ծրագրի շրջանակներում «Արթիկի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ը սպասարկում է Արթիկի, Անիի և Ախուրյանի տարածաշրջանների 66 դպրոցներ, 28 ՆՈՒՀ և 3 ՄԿՈՒ: Տարեկան պլանավորման ցուցանիշով հանրակրթական դպրոցներում նախատեսված էր 85 գնահատում, հաշվետու ժամանակահատվածում ՝ 53 գնահատում, կատարվել է 59 -ը: ՆՈՒՀ-ում տարեկան պլանավորման ցուցանիշով նախատեսված էր 36 գնահատում, հաշվետու ժամանակահատվածում ՝ 4, կատարվել է 14 գնահատում: ՄԿՈՒ-ում տարեկան պլանավորման ցուցանիշով նախատեսված է 8 գնահատում, հաշվետու ժամանակահատվածում՝ 3, սակայն գնահատումներ չեն իրականացվել, ՄԿՈՒ-ի կողմից գնահատման հայտեր չստացվելու պատճառով:

## 2. Մանկավարժահոգեբանական ծառայությունների մատուցում

Անիի, Ախուրյանի և Արթիկի տարածաշրջանների հանրակրթական դպրոցներում հաշվետու ժամանակահատվածում ընդհանուր առմամբ սովորել են ԿԱՊԿ ունեցող 270 աշակերտներ՝ 193տղաներ և 77 աղջիկներ: Աջակցության ծառայություններ է մատուցվում 53 դպրոցներում: Տնային ուսուցում կազմակերպվել է 11 աշակերտների համար: ՏՄԱԿ-ի կողմից մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ են ստանում դպրոցներում 254 աշակերտներ, իսկ ՆՈՒՀ-ում 59 -ը: ՆՈՒՀ-երում հաճախել են ԿՋԱՊԿ ունեցող 59 սաներ, որից 51 տղա և 8 աղջիկ:

## 3. Կարողությունների զարգացում / վերապատրաստումներ /

Արթիկի ՏՄԱԿ-ը պարբերաբար, ըստ նախատեսված և տնօրենի կողմից հաստատված գրաֆիկի անցկացնում է վերապատրաստումներ: Հաշվետու ժամանակահատվածում կատարվել է 66 դպրոցներում վերապատրաստումներ: Վերապատրաստումներին մասնակցել են 1306 անձ, նախատեսված 700-ի փոխարեն: Ունենք սպասվածից շատ մասնակցություն: Տարեկան պլանավորման ցուցանիշով ունենք նախատեսած 28 ՆՈՒՀ-երում վերապատրաստումներ, հաշվետու ժամանակահատվածում անցկացվել է 27 ՆՈՒՀ-ում: Վերապատրաստումների թիվը եղել է նախատեսված տարեկան ցուցանիշով 43, հաշվետու ժամանակահատվածում 25՝ անցկացվել է 26-ը : Վերապատրաստվող անձանց թիվը նախատեսված էր 400 անձ, սակայն մասնակցել են 383: Հաշվետու ժամանակահատվածում ունենք նախատեսված 3 ՄԿՈՒ-ում կատարվել է 3-ում: Վերապատրաստումներին մասնակցել են 97 անձ: Ինչպես հանրակրթական դպրոցների այնպես էլ

ՆՈՒՀ-երի աշխատակիցները և ծնողները մեծ սիրով եմ մասնակցում վերապատրաստման դասընթացներին: Ստորև ներկայացնում ենք հանրակրթական դպրոցներում , ՆՈՒՀ-ում և ՄԿՈՒ-ում անցկացված վերապատրաստումների թեմաները և մասնակիցների թիվը:

## ՆՈՒՀ

| ՀՀ | Վերապատրաստման թեմա | Վերապատրաստման մասնակից անձանց թիվ |
|---|---|---|
| 1 | Ընտանեկան դաստիարակություն | 137 |
| 2 | Ագրեսիվ վարքի պատճառները, հետևանքներն ու հաղթահարման ուղիները մանկական տարիքում | 162 |
| 3 | «Կրթական աջակցող միջոցներ, մատչելիություն և խելամիտ հարմարեցումներ» | 76 |
| 4 | ԱՈւՀՊ-ի վարման և լրացման կարգը | 8 |
| 5 | | |

## ԴՊՐՈՑՆԵՐ

| ՀՀ | Վերապատրաստման թեմա | Վերապատրաստման մասնակից անձանց թիվ |
|---|---|---|
| 1 | «Կոնֆլիկտներ.կառավարման և հաղթահարման ուղիները» | 86 |
| 2 | «Հույզերի տեսակները և կարգավորման մեթոդները» | 123 |
| 3 | Ապահով և անվտանգ կրթական միջավայր | 183 |
| 4 | Կրթության աջակցող միջոցներ . մատչելիություն և խելամիտ հարմարեցումներ | 164 |
| 5 | Անհատական ուսուցման պլան | 39 |
| 6 | «Մասնագիտական կողմնորոշում» | 189 |
| **7** | Ուս. հաստ. երեխաների պաշտպ., հոգեսոցիալական աջակցության և հոգեկան առողջ. դեպքերի արձագանքման և ուղղորդման մեխանիզմներ | **465** |
| 8 | Միասին հանուն յուրաքանչյուր երեխայի | **57** |

| ՀՀ | Վերապատրաստման թեմա | Վերապատրաստման մասնակից անձանց թիվ |
|---|---|---|
| 1 | Ապահով և անվտանգ կրթական միջավայր | 30 |
| 2 | Դեռահասության ճգնաժամ | 37 |
| 3 | Կոնֆլիկտներ. կառավարման և հաղթահարման ուղիները | 30 |

## 4. Խորհրդատվություն

Հաշվետու ժամանակահատվածում ՏՄԱԿ-ի մասնագետները 66 դպրոցներում տվել են խորհրդատվություններ մանկավարժներին, ծնողներին, վարչական աշխատողներին. : Խորհրդատվությունների թիվը նախատեսված էր 413, կատարվել է 469-ը: Խորհրդատվություն ստացած անձանց թիվը նախատեսված 2685- ի փոխարեն 3858 անձ է ստացել խորհրդատվություն: ՈՒնեցել ենք սպասվածից շատ մասնակցություն:Հաշվետու ժամանակահատվածում 66 դպրոցներում անցկացվել են թվով 369 խորհրդատվություններ, վերջինիս արդյունքում խորհրդատվություն են ստացել նախատեսված 2050-ի փոխարեն 3106 անձ: 28 ՆՈՒՀ-երում անցկացվել են թվով 96 խորհրդատվություններ, վերջինիս արդյունքում խորհրդատվություն են ստացել նախատեսված 600-ի փոխարեն 696 անձ: Հաշվետու ժամանակահատվածում 3 ՄԿՈՒ-ում անցկացվել են 4 խորհրդատվություն, վերջինիս արդյունքում խորհրդատվություն են ստացել նախատեսված 35 անձի փոխարեն 56 անձ:

## 5. Մշտադիտարկում

ՏՄԱԿ-ի կողմից հաշվետու ժամանակահատվածում հանրակրթական դպրոցներում նախատեսված էր 66 մշտադիտարկումներ, իրականացվել են 66-ը : Մշտադիտարկումներ են իրականացվել ԿԱՊԿ գնահատման գործընթացի, մանկավարժահոգեբանական աջակցության գործընթացի, ուսումնական գործընթաց և միջավայրային հարմարեցումներ և ծնող-ուսուցիչ-դպրոց համագործակցություն ուղղություններով: Դպրոցների վարչական աշխատակիցների հետ քննարկվել են նկատված բացթողումները և կարճ ժամանակահատվածում իրականացվել են խելամիտ քայլեր ինչի արդյունքում ունենք դրական առաջընթաց վերը նշված ուղղություններում: ՆՈՒՀ-ում նախատեսված էր 28 մշտադիտարկում իրականացվել են 27-ը մեկ ՆՈՒՀ-ում կատարվում է վերանորոգում: : ՄԿՈՒ-ում նախատեսված էր 3 մշտադիտարկում, և այդքան էլ կատարվել է:

## 6. Ֆիզիկական միջավայրային և խելամիտ հարմարեցումներ

Ֆիզիկական միջավայրային հարմարեցումներից 2026թ. տարեկան պլանավորման ցուցանիշով ունենք 4 հանրակրթական դպրոցներ, որոնք ֆինանսավորվելու են 2026թ-ին և չորրորդ եռամսյակում ունենալու են միջավայրային հարմարեցումներ:

Խելամիտ հարմարեցումների մասով հաշվետու ժամանակահատվածում ՆՈՒՅ-ում ունենք պլանավորված 14 հաստատություններ, սակայն 18 ՆՈՒՅ-ում ապահովվել են խելամիտ հարմարեցումներով, նախատեսված 47-ի փոխարեն 43 սանի մասով: ՆՈՒՅ-ում ընդհանուր առմամբ ունենք 59 սաներ, 16 սաներ դեռ 2026թ.-ին չեն ֆինանսավորվել, այդ իսկ պատճառով առայժմ խելամիտ հարմարեցումներով դեռ չեն ապահովվել: Հանրակրթական /51/ դպրոցներում պլանավորել էինք, որ հաշվետու ժամանակահատվածում ապահովվելու են խելամիտ հարմարեցումներով և 51-ում էլ ապահովվել են: Խելամիտ հարմարեցումներ ստացող աշակերտների թիվը նախատեսել էինք 256 և 256-ը այս պահին ստացել են խելամիտ հարմարեցումները մասնակի կամ ամբողջական ծավալով:

## 7.Համագործակցություն

ՏՄԱԿ-ի տնօրենը և մի քանի աշխատակիցներ մասնակցել են <<Արաբկիր>> Բժշկական Համալիր-Երեխաների և Դեռահասների Առողջության Ինստիտուտի և <<Կյանքի Ճանապարհ>> բարեգործական հիմնադրամի կողմից կազմակերպած կոնֆերանսին:

<<Հույս Արթիկ>> ՍՀԿ հաշմանդամների աջակցության կենտրոն ՀԿ-ի և <<Պատիվ >> սոցիալական աջակցման ՀԿ-ի հետ համատեղ կատարվել է աշխատաժողով <<Միասին հանուն յուրաքանչյուր երեխայի>> թեմայով:

Կենտրոնի անվանումը՝ « Արթիկի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն » ՊՈԱԿ

Տնօրեն՝ ______________ (ստորագրություն)    Լիլիթ Մովրովյան (անուն, ազգանուն)

Կ.Տ.

« 01 » « հուլիսի» 2026թ.